| | | |
|---|---|---|
| *Երևան քաղաքում, Միրիի կողմից վաճառված սեփականատեր չունեցող մուլքերի գինը՝* | *17521* | » |
| *Նախիջևանում Միրիի կողմից վաճառված սեփականատեր չունեցող մուլքերի գինը՝* | *10000* | » |
| *Երևանի փողերանոցի կապալառուից 1138 թ. մուհառամ ամսի սկզբից մինչև նույն թվականի վերջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28)* | *2050* | » |
| *Նախապես օրապահիկ (ուլուֆե) տրված լինելու պատճառով, զաիմ Մուհամադ-աղայի ձեռքով եկած տեղի զինվորականության ռոճիկների [գումարից] նրանց միայն 4451 ղուրուշ, 1137 թ. զիհաջջայի ամսականը բաժանվեց, մնացյալ գումարը մուտք եղավ Երևանի գանձատանը.* | *13317* | » |
| | *412005* | » |

## Սրանից՝ ներքոհիշյալ ծախսերը՝

| | | |
|---|---|---|
| *Ըստ մայր մատյանի, բարձրագույն հրամանով կափուկուլիների տեղացի զինվորների (երլուներ) և այլոց մսի, հացի և գարու հատկացումների համար, 1137 թ. սաֆարի 22-ից մինչև 1138 թ. սաֆարի վերջը (1724 թ. նոյ. 10—1725 թ. նոյ. 6) 361 օր՝* | *34000* | » |
| *Ըստ հանդիպակաց մատյանի, տարբեր տոկոսներով, տեղացի զինվորականության ռոճիկների համար 1138 թ. մուհառամի սկզբից մինչև հիշյալ տարվա վերջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28)՝* | *55551* | » |
| *Միրիի լևենդների օրապահիկի (ուլուֆե) և հատկացումների համար, 1138 թ. մուհառամի 15-ից մինչև 1138 թ. զիկա՚դայի 15-ը (1725 թ. սեպտ. 23—1726 թ. հուլիս 15) 10 ամիս, 400 հոգի՝* | *23639* | » |
| *Ըստ մայր մատյանի, Ղարսից գնված պաշարների, Շորագյալի պահեստից Երևանի պահեստը տեղափոխելու դրաստների վարձի համար՝* | *12024* | » |
| *Բարձրագույն հրամանով, Երևանի օթևանի ու կարավանատան համար, 1138 թ. մուհառամի սկզբից մինչև նույն տարվա վերջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28)՝* | *200* | » |
| *Խասսեյի ճարտարապետ Մուստաֆա-աղայի ներկայացմամբ և կնքյալ մատյանով, խանդակի փորման և նոր զինանոցի ու պահակատների կառուցման, ճարտարապետի, որմնադրի, քարհատների և բանվորների վարձի համար, 1137 թ. սաֆարի 22-ից մինչև 1138 թ. զիհաջջայի 11-ը (1724 թ. հոկտ. 11—1725 թ. օգ. 21) 110 օր՝* | *12413* | » |
| *Խանդակ փորելու և պարիսպներ կառուցելու համար, բանվորների, քարհատ վարպետների և հյուսնի տրված վարձն ու երկաթագործների ծախսի ու կարիքների գինը, 1138 թ. ռաբի՚ II-ի 12-ից մինչև 1138 թ. զիկա՚դայի վերջը (1725 թ. դեկտ. 17—1726 թ. հուլ. 30)՝* | *25950* | » |
| *Հրետանու որոշ կարիքների ծախսի և պետական պահեստների տեղեկագրերի համար՝* | *1200* | » |
| *Գումարը՝* | *166777* | » |
| *Մնացյալը՝ Երևանի գանձատան առաքած մալը՝* | *245228* | » |